




“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, 1897

ԹԻՒ 1




ՉԻՆԻ Ի ԳՈՐԾՈՒԿ ԱՇ

ՁԻՆԻ ՓՈԹՈՐԻԿ ՄԸ

Հովը ի՞նչպէս կը մղէ ձիւնը և ի՞նչպէս արագ կ'աւելնայ երկրիս ճերմակ ծածկոցին թանձրութիւնը : Ձիւնի փոթոլիկը պզտիկ բաներու կարևոր ըլլալուն շատ յարմար օրինակ մըն է : Ձիւնի ամէն մէկ պատառ նուրբ և փափուկ է բայց անոնք միխոններով կ'իջնեն, ժամերով կ'իջնեն, և երբ փոթորիկը դադարի, կը տեսնենք որ ամբողջ երկիրը ծածկուած է մէկ երկու ոտք խոր

և չկորսնցնենք ճամբան : Բայց մեր բուր ձմեռնային զուարճութիւններուն մէջ միտք բերենք թէ պէտք է գոթցուցնենք և օգնենք սոցալիտիներուն որոնց համար փոթորիկը, որ թերևս մեզի զբօսանք է, թշուառութիւն և ցաւ է : Երանի անոր որ ազբատին հոգ կը տանի :"



ՏՂՈՑ ԵՐԳԸ

Տղաք պէտք է որ երջանիկ ըլլան :

յայտեն թէ՛ կ'աւելցնեն իրենց երջանկութիւնը, և եթէ սորվին աղէկ երգել, ուրախութիւն կ'ըլլայ իրենց բուր կեանքին մէջ : Նաև տղայոց սոված երգերէն շատին իմաստը այնպէս ընտիր և ազնիւ է որ տղաք աղէկ կ'ընեն զանոնք սորվելով : Այս պատկերը նկարողը կը ցուցնէ թէ այս սիրելի աղջիկները կ'երգեն երգ մը, որուն նշանակութիւնը սա է թէ եթէ իրենց մէկ խօսքը պիտի ուրախացնէ ուրիշի մը կեանքը, կամ եթէ իրենց մէկ երգը պիտի ախփէ ուրիշի մը սիրտը, կ'աղօթեն Աստուծոյ որ սէր շնորհէ իրենց և օգնէ խօսիլ այդ խօսքը և երգել այդ երգը :



ՏՂԱՔ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՋ

Եկեղեցին ի՞նչ պիտի ըլլար աշխարհի մէջ եթէ տղաք ա՛լ չգային աշխարհ : Կը հասկնաք թէ ի՞նչ պիտի ըլլար : Մեծցած մարդիկ միայն մնացած ըլլալով եկեղեցիին մէջ, անոնք հետզհետէ աւելի պիտի մեծնային և տարիքին պիտի առնէին և հետզհետէ տխուր պիտի ըլլային զիրենք զուարթացնող տղայ չգտնուելուն համար : Ե տարիքնին առնողները մէկիկ մէկիկ մեռնելով պարապ տեղեր պիտի թողէին, վասն զի իրենց տեղերը լեցնող պիտի չգտնուէր եթէ տղաք դադարէին աշխարհը զայլէ : Ո՛հ, տղաք, ի՞նչպէս կ'անցնին եկեղեցիին մէջ եղող մեր սիրելի մեծ բարեկամները : Եթէ անոնց տեղը բռնելու համար մեծցած տղաքներ չկենան, քանի մը տարուան մէջ պիտի դատարկանան եկեղեցիները : Ուրեմն կը տեսնէք թէ եկեղեցին առանց տղայ չկրնար ըլլալ : Առանց ձեզի, իմ փոքրիկ բարեկամներս, եկեղեցին չմնար : Թերևս խորհած չէիք առաջ թէ եկեղեցին ձեզի պէտք ունի : Հիմա մտածեցէք ատոր վրայ : շատ մեծ ինդիլ է : Կը ցուցնէ թէ ձեր կեանքերն ի՞նչպէս կարևոր են : Եւ մի խորհիք թէ ձեր հոս պէտք ըլլալուն մի միայն պատճառը ուրիշ կեանքի մը մէջ մտնող աւելի տարիքոտ բարեկամներուն թողած պարապ տեղերը լեցնեն է : Դուք պէտք էք եկեղեցիին մէջ այն բաներուն համար որ ունիք իբրև տղայ :

Երբ եկեղեցի կու գաք, ամէն մարդ աւելի երջանիկ կ'ըլլայ, դուք կը զօրացնէք և կ'ուրախացնէք ամբողջ շէնքը և ամբողջ պաշտամունքը : Իսկ դալով ինձի որ այս խօսքերը կը խօսիմ ձեզի, ես առանց ձեզի չեմ ըլլալ, դուք անհրաժեշտ պէտք մըն էք



ձիւնի սակ : Թերևս մէկ գիշերուան մէջ այնքան ձիւն կ'իջնէ որ եթէ բուրը մէկ տեղ մը դիզուին, Արգէոս լեռան չափ մեծ լեռ մը կը ձևանայ : Ե սակայն կը բաղկանայ այնպիսի նուրբ և թեթեւ պատառներէ որոնց մէկը հազիւ ցորեն մը կը կշռէ : Գալ ջառողջ և լաւ հազուած մէկու մը համար զբօսանք է դուրսը գտնուիլ ձիւնի փոթորիկի ատեն, մանաւանդ եթէ ճամբան ցանկերով որոշուած է, այնպէս որ ձիւնը չփոթեցնէ մեզ

Չափահաս անձինք կրնան ունենալ հոգեր, տանելու բեռներ այս կեանքին մէջ, բայց երբ կը տեսնենք տղայ մը որ սովորաբար նեղուած և տխուր կ'երևնայ, կը ցաւի մեր սիրտը վասն զի անոր այդ երևոյթը մեզի անբնական կը թուի : Մանկութեան ժամերը պէտք է որ ուրախ և զուարթ ժամեր ըլլան, և երգը ուրախութեան արտայայտութիւն է : Թուշտներուն բնական է երգել, տղայոց բնական է երգել : Անոնք երգելով թէ՛ կ'արտա-

ինձի համար : Գարողչին եռանդը գրեթէ կը մարի եթէ չտեսնէ հոս ձեր երեսները և չզգայ թէ դուք կ'աճիք տեղույս արժանավայել հոգիով :

Դուք այլ տղաք , չէք կրնար ըլլալ առանց եկեղեցիին , ինչպէս որ եկեղեցին չկրնար ըլլալ առանց ձերոց : Այն տղաքը որ կը մեծնան առանց եկեղեցի գալու երբ առողջ են , այնպէս անկատար են ինչպէս առանց տան , առանց ընտանեկան պաշտպանութիւն վայելելու մեծցած տղաք : Բայց դիցուք թէ եկեղեցի չգաք , դիցուք թէ սովորութիւն ընէք Կիրակիները տունը անցընել ծուլութեամբ և յիմարարար , այն ատեն ունակութիւն մը պիտի կազմէք որ կամաց կամաց պիտի բարձրանայ քարէ մեծ պարսպի նման , և դուրս պիտի մնաք ձեր երկնաւոր Հօրը սրբարանէն :

Դուք ձեր մէջ ունիք բան մը զոր կրնաք տալ եկեղեցի գալով , և որ կ'աւելցնէ եկեղեցիին ոյժը և գեղեցկութիւնը . եկեղեցին ալ ձեզի տալու բան մը ունի զոր չէք կրնալ գտնել ուրիշ տեղ երկրիս վրայ , բայց միայն Աստուծոյ սրբարանին մէջ :



«ԱՐՍԵՆԻ ԿԵԱՆՔԸ»

Մայրիկ , ըսաւ փոքրիկ Արսէն , Գեորգ կ'ըսէ թէ եր մայրը գերբեր կը շինէ : « Դրաւ , » ըսաւ մայրը , և յետոյ շարունակեց իր ձեռքի կարը և մտցաւ Արսէնը որ կը ջանար գլխի վրայ կայնիլ : « Մայրիկ , » դարձեալ ըսաւ Արսէն , « չատ դժուար է գերբ շինել : » « Չեմ գիտեր , » ըսաւ մայրը : « Ես գերբ մը պիտի շինեմ , » ըսաւ պզտիկ մարդը :

Ճիշդ այդ ատեն դուռը զարնուեցաւ և Արսենի մայրը գնաց դուռը բանալու : Երբ ետ եկաւ , տեսաւ որ իր փոքրիկ մանչը իր աթոռին վրայ նըստած արագ արագ կը զրէր , բայց ուրովհետեւ քարէ տախտակի վրայ կը զրէր , փաս մը չէր ըլլար : « Մայրիկ , ես գերբս լինցուցի , » ըսաւ : « Չէ , » ըսաւ մայրը , քիչ մը մտածելով , « չլինցուցուցի : Աստուած քեզի գրելու գերբ մը տուած է : Կը յուսամ թէ մեծ և երկայն գերբ մըն է ան , գեղեցիկ պատմութիւններով լեցուն : » « Ի՞նչ է գերբս անունը , » հարցուց տղան մօրը մօտիկ գալով : « Գերբիդ անունն է Արսենի Կեանքը : Երբ միայն երես մը կրնաս գրել , և պէտք է շատ զոյշ ըլլաս որ սև բիծեր չընես անոր մէջ գէշ բաներ ընելով : Երբ կը ծռուկես երեսդ և կու լաս , կ'արի գերբիդ ե-

րես : Եւ երբ կ'օգնես մայրիկիդ , գէւորդ զուարթ կը պահես , և չես կրուիր Օնիկին հետ , գերբիդ երեսդ գեղեցիկ կ'ըլլայ , վրան սիրուն պատկերներով : »

« Ե՞րբ պիտի լինցնեմ աս գերբը , » հարցուց Արսէն :

« Երբ Աստուած ըսէ թէ ա՛լ գերբդ բաւական երկայն է , » պատասխանեց մայրը , « հրեշտակ մը կը զրկէ անոր կողքերը գոցելու և կնքելու համար մինչև այն մեծ օրը երբ մեր բոլոր կեանքի գերբերը պիտի բացուին ու կարդացուին : »

Արսէն ժամանակ մը նստաւ շատ հանդարտութեամբ և յետոյ ըսաւ կամացուկ մը , « Միրելի փոքրիկ Լուսինա իր գերբը շինելը լինցուց երբ դրուեցաւ ճերմակ սնուկին մէջ և ճերմակ վարդերով ծածկուեցաւ : »



« Այո , » ըսաւ մայրը , « անոր կեանքի գերբը իրօք Աստուծոյ գովաբանութեան փոքրիկ երգարան մը եղաւ : Անոր շինած երգարանին երեսները մաքուր և ճերմակ էին , առանց բիծ ունենալու իրենց վրայ : »

Արսէն վեր նայեցաւ , և տեսաւ որ երկու կաթիլ արցունք թափեցաւ մօրը կարին վրայ , բայց պայծառ արցունքներ էին անոնք , և անոնց հետ պայծառ ժպիտ մը խառնուեցաւ :

ՁԻՆԻ ՄՈՒՃԱԿ ՀԱԳԱՅ ՁԻ

Այո երկրին մէջ անսովոր բան չէ ձիւնի մուճակ հագնող մարդ տեսնելը : Բայց մայրաքաղաքիս մէջ բնակողներ երբեք չեն տեսներ ձիւնի մուճակ , վասն զի հոս բաւական ձիւն չի ընել որ անոր պէտք կենայ , սակայն լեռնային կողմեր և ներքերը լեռնադաշտերուն մէջ օգտակար կ'ըլլան այն ատեսակ մուճակները : Կը յիշենք որ առաջին անգամ տեսանք ձիւնի

մուճակ քսանընդ տարի առաջ ձրմեռուան մը մէջ : Ձի հեծած կը ճամբորդէինք Մուշի դաշտէն դէպ ի Սբ. Կարապետի վանքը , ուր վանահայր էր այժմու կաթողիկոսը , բայց անկարելի գտանք յառաջ երթալը , և սակայն քանի մը մարդիկ որոնք ձիւնի մուճակ հագած էին , մեզմէ անցան և դիւրաւ կատարեցին իրենց ճամբորդութիւնը :

Թերևս եթէ գիտնայինք քանատացուց սովորութիւնը և անոնց պէս մենք ալ ձիւնի մուճակ հագնէինք մեր ձիերուն , կրնայինք հասնիլ համբաւոր վանքը : Մենք երբեք տեսած չենք ձիու մը այսպէս մուճակ հագնիլը , և կը թուի թէ եթէ հագնի , ոտքերը իրարու պիտի դաշին , ուստի պէտք է որ ձիերը սորվին իրենց քայլերը աղէկ առնել ոտքերնին

իրարմէ հեռի դնելով : Եթէ Մուզը , որուն պատկերը դրինք անցեալ Նոյեմբերի թիւին մէջ , կարող ըլլար ձիւնի մուճակ հագնիլ , որսորդները պիտի չկրնային դիւրութեամբ բռնել զանիկա :



ՀՈՌՈՒԹԻ ԱՅՅԵԼՈՒՆ

« Մայրիկ , մէկը հոս եկաւ իմ երթալէս ի վեր , » ըսաւ Հուլիս իր մօրը : Հուլիս բոլոր օրը անէն դուրս կը գլուխուէր նախաճաշէն ետքը . և հիմա որ արևը մարը մտած էր , լուսինը արծաթի պէս կը կախուէր իրենց գլխուն վերևը : « Նայի՛մ , » ըսաւ մայրը , գլխարկը գլուխը դնելով : « Այո , այցելու մը ունեցայ : » « Ի՞նչ , իրաւ կ'ըսես , մայր , ո՞վ էր ան : » « Ինք չըսաւ իր անունը , » ըսաւ մայրը խորհրդաւոր ժպիտով մը : « Իր անունը չըսաւ քեզի : Ի՞նչ տարօրինակ բան . ուրկէ՞ եկաւ : » « Չըսաւ : » « Ինչո՞ւ եկաւ մեր տունը , »

«Գանձի մը պատճառներու համար : Նախ, բժշկեց զլիսի ցարը : Նամակ մը բերաւ սիրելի բարեկամէ մը կարմիր վարդ մը դրաւ սեղանիս վրայ . քիչ մը կար կարեց ինձի համար , և ինձի քանի մը նոր անուշ խորհուրդներ տուաւ :»

«Ի՞նչ տարօրինակ այցելու» մը մընջեց Հուլիս : «Բոլորը ա՛տ է :» «Ո՛չ, ինձմէ խնդրեց որ շատ մը բաներ ընեմ իրեն համար : Խնդրեց ինձմէ որ ապուր մը եփեմ հիւանդ աղջկան մը համար , երկու նամակ դրեմ և երկու անձանց օգնութիւն առաջարկեմ , այցելութեան մը երթամ , կարկանդակ մը շինեմ , և շատ մը ուրիշ բաներ :»

«Եւ բրբ՛ր այդ դորժերը :» «Մնոնցմէ մէկ քանին երբ և մէկ քանին երբ ալ չըրի : Բայց հիմա երանի՛ թէ բոլորն ալ ըրած ըլլայի կը խորհիմ :»

«Ես շատ կը փափաքեմ տեսնել այդ այցելուն , մայրիկ , Նորէն կու գայ արդեօք :» «Ո՛չ, ա՛լ չկրնար գալ , վասն զի մեռաւ արևին մարը մտած ատենը :»

«Մայրիկ , ի՞նչ կ'ըսես , մեռաւ , ի՞նչ ահաւոր բան : Եւ տակաւին կը ժըպտիս . կարծեմ թէ կատակ կ'ընես քիչ մը . այնպէ՛ս է :» «Ճիշդ կատակ չէ ըրածս , Հուլիս , այլ քիչ մը առտիկ ձեռով կը խօսիմ , զոր կարծեմ կրնաս գուշակել երբ ըսեմ թէ անոր քոյրը պիտի գայ վաղն առտու արևածագին , —իր երկուորեակ քոյրը , — այնպէս նման իմ այցելուիս , որ ոչ մէկը կրնայ ըսել թէ տարբեր են իրարմէ , թէպէտ իր ձիւքերէն ոմանք և իր փափաքներէն ոմանք այսօրուան հիւրին ունեցածէն տարբեր են :»

«Ա՛յ ըսես թէ անունը չե՞ս դիտեր , մայրիկ :» «Ես ատանկ չըսի . ըսի թէ անիկա իր անունը չըսաւ ինձի : Բայց ես դիտեմ — Հինգ շաբթի է :» «Հինգ շաբթի :» պուռաց Հուլիս խնդարով : «Ուրեմն այսօր ըսել կ'ուզես :» «Ո՛յո , այսօր :» «Եւ վաղուան այցելուիդ անունը պիտի ըլլայ :» — «Ուրբաթ , հարկաւ :»

Հուլիս շատ հաճոյք զգաց Հինգ շաբթի այցելու , Ուրբաթ այցելու ըսուելուն համար . բայց երբ հետեւեալ առաւօտ արթնցաւ իր փոքրիկ անկողնին մէջ , կամացուկ մը ըսաւ ինքն իրեն , «Ի՞նչպէս ես Տիկին Ուրբաթ : Ի՞նչ բերիք ինձի այսօր : Է՛հ , պիտի ընեմ ամէն ինչ որ առաջարկես ինձի , ինչու որ պիտի մեռնիս արևամուտին , այնպէս չե՛ :»

Եւ իրաւ որ Տիկին Ուրբաթ առաջարկեց փոքրիկ աղջկան որ ելլէ անկողնէն , հագուի ժամանակին , և առաւօտեան աղօթքին երթայ :

ԳՈՂ ԲՈՆՈՂ ՓԻՂՐ

Մենք տակաւին չենք հասկցած թէ մունջ չորքոտանին երբ ո՛րչափ բան կրնան գիտնալ : Մնոնք իրենց ըսուած քանի մը բաները կը հասկնան , թերևս մեր կարծածէն շատ մը աւելի :

1863 ին Հնդկաստան երկաթուղիի կայարանի մը մէջ փիղ մը կը գործածուէր ծանր կոճղեր իրարու վրայ դնելու համար : Փիղերը մեծ մաքրութեամբ և արագութեամբ կը կատարեն այսպիսի գործերը : Վերատեսուչը կասկածեցաւ թէ փղապանը կը գողնար անասունին տրուելու բրինձը : Փղապանը սաստիկ բողբոջեց ատոր դէմ , և պուռաց , ողբաց թէ ի՞նչ դժբաղդ մարդ էր որ այդպիսի յանցանք կը գորուէր իր վրայ : Մինչ այս վէճը տեղի կ'ունենար բարձրաձայն , փիղը հոն կանգնած էր , և թէպէտ ոչ ոք կը կարծէր թէ անասունը կը հասկնար խօսուած խօսքերը , արդիւնքը զարմանալի եղաւ : Փիղը յանկարծ բռնեց մարդուն մէջքը փաթթուած մեծ լաթը , պատուեց զայն , և ահա վար թափեցաւ քանի մը քաշ բրինձ զոր մարդը լեցուցած էր այն լաթին մէջ : Աւուրիչ ապացոյց պէտք չէր հաստատելու համար թէ մարդուն յանցանքը թէ՛ փիղին ուշիմութիւնը : Մնասունը հաւանորէն տեսած էր որ գող ծառան այդ լաթին մէջ կը դնէր իր կերակուրը , և պարզապէս առիթ գտած էր իր իրաւունքը ձեռք բերելու :»

Աստուած , որ մարդուս միտք տուաւ , անասուններուն չտուաւ խօսելու կարողութիւն . բայց ո՛վ կրնայ ըսել թէ ի՞նչ իմացողութիւն տուած է անոնց : Մնասունը կը գործածենք Աստուծոյ փառքին համար և կառավարենք անոր երկիւղով :

Ի՛ՆՉ ԴԻՐԲ ՊԻՏԻ ԳՐԱԻՍՍ

Գուն կ'աշխատիս դիրք մը գրաւել : Կրնաս դիրք մը շինել քեզի համար : Նոր գիւտով կամ ձեռնարկով մը կամ իմաստուն տնօրինութիւնով մը կրնաս հնարել գործ մը զոր ուրիշ մը երբեք ըրած չէ առաջ , և այսպէս ունենալ դիրք մը որ բոլորովին քու սեփականութիւնդ ըլլայ : Բայց աղաք երբ կը մեծնան , շատ անգամ կը գրաւեն դիրքեր զորոնք ուրիշ մարդիկ գրաւած էին , և կը կատարեն գործեր զորոնք ուրիշ մարդիկ կատարած էին : Ուստի շատ կարևոր է որ անոնք մտածեն թէ

ինչ դիրք պիտի գրաւեն երբ մեծնան : «Կարգացած եմ տղի մը վրայ որ նշանաւոր երազ մը տեսաւ :» կ'ըսէ հեղինակ մը : «Երազին մէջ կը տեսնէր որ քաղաքին բնակիչներուն ամենէն հարուստը իրեն եկաւ և ըսաւ , «Ես ձանձրացած եմ տունէս և կալուածներէս , եկուր և վրադ առ անոնց հողը , և դանոնք քեզի կու տամ :» Յետոյ եկաւ պատուաւոր դատաւոր մը և ըսաւ , «Կ'ուզեմ որ իմ տեղս դո՛ւն դատաւոր ըլլաս , ձանձրացած եմ ամէն օր դատարանին մէջ կենայէ . աթոռս քեզի կու տամ եթէ կ'ընես իմ գործս :» Այնուհետև բժիշկը եկաւ և առաջարկեց իր ընդարձակ փորձառութիւնները անոր հաղորդել , վասն զի կ'ուզէր այլ ևս հանդիստ ընել . և այսպէս շատ մը ուրիշ առաջարկութիւններ ալ : Վերջապէս ծերունի դեղաւոր ոտքերով եկաւ և ըսաւ , «Ես գիտեմ որ մը գերեզմանը պիտի իջնեմ , և եկայ որ տեսնեմ թէ այս գիտնաւորներուն և այս փողոցներուն մէջ կա՞յ մէկը որ կ'ուզէ տեղս գրաւել :»

Ամէն մէկ տղայ պէտք է պատրաստուի իր գրաւելու դիրքին համար : Ժրջան , համեստ , աղիւ և հաւատարիմ տղան աղէկ դիրքի մը համար կը պատրաստուի : Բայց ստախօս , երգում և հայհոյութիւն ընող , և չարբու հետ ընկերացող տղան ի՞նչ դիրք պիտի գրաւէ :

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԵՆ



1. Հայ տառ մը ,
2. Հրէից մէկ ամբողջ ,
3. Հին ժամանակի զէնք մը ,
4. Ասիոյ մէջ լիճ մը ,
5. Գեղեցիկ տարազնայ թուղուն մը ,
6. Ահարանի որդւոց մին ,
7. Հերովդեսի անդակեցը :

Նշանակեալ անունները ըստ օրինակին տակէ տակ շարելով՝ վերէն վար պիտի կարգաս

1. Քաղաք մը ուր Դաւիթ ապաստանեցաւ ,
2. Քաղաք մը զոր գրաւեց Դաւիթ ,
3. Առաջին նաւը ,
4. Նուովայեցուց իր զինուորը զեշտած ,
5. Գերազոյն անձ , որ զգրաւոր աշտեց ,
6. Հայ տառի մը ,
7. Հայ տառ մը :



Ամերիկայի Միտինսոնի Գրքատանէն կողմէն , Արտօնատէր ձ. Բ. ԿԻՐԻՆ Տնօրէն—Սմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ Ֆինանսներու Երգուչու , Ամերիկան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՕՍԿԱՐ ՊՕՍՏԱՆԻՍ